ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 25-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԱՐԳՄԱՆՉԻ, ՍՈՒՐԴՈԹԱՐԳՄԱՆՉԻ ԵՎ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետի, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 52-րդ հոդվածի 8-րդ մասի և 56-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների ապահովման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձանց ներգրավման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարին՝ երկու ամսվա ընթացքում ապահովել թարգմանչի, սուրդոթարգմանչի ու տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայությունների ձեռքբերման մրցույթի հայտարարում:

3. Հրամանը ծանոթացնել ըստ առնչության:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

20.03.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ՆԳ նախարարի 2025 թվականի
մարտի «20»-ի N 25-Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԱՐԳՄԱՆՉԻ, ՍՈՒՐԴՈԹԱՐԳՄԱՆՉԻ ԵՎ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում և ենթակա պետական մարմիններում թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձանց ներգրավելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է ապահովել Ներքին գործերի նախարարությունում և ենթակա պետական մարմիններում հայերեն լեզվին չտիրապետող կամ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի բոլոր իրավունքների իրացումն այն լեզվով, որին տվյալ անձը տիրապետում է:

3. Թարգմանչի, սուրդոթարգմանչի ու տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ տրամադրվում են հետևյալ դեպքերում՝

1) ձերբակալված անձի՝ իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, ձերբակալման կատարման կարգի և պայմանների, դիմումներ և բողոքներ ներկայացնելու կարգի մասին տեղեկությունները, ինչպես նաև իր վերաբերյալ մշակված տեղեկատվությունն իր մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով գրավոր և բանավոր ստանալու իրավունքի ապահովման համար.

2) ապաստան հայցողի վերաբերյալ գրավոր որոշումները, ծանուցումները և այլ վերաբերելի փաստաթղթերը ապաստան հայցողին մայրենի կամ հասկանալի այլ լեզվով տրամադրելու համար.

3) այլ դեպքերում, երբ Ներքին գործերի նախարարության և ենթակա պետական մարմինների իրենց լիազորությունների շրջանակներում գործունեության ընթացքում անձի պատշաճ ծանուցման, հաղորդակցության կամ այլ իրավունքների և ազատությունների ապահովման համար առկա է նման անհրաժեշտություն:

4. Թարգմանչի, սուրդոթարգմանչի ու տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայությունների մատուցումը կատարվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Որպես թարգմանիչ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» N 1509-Ն որոշման պայմաններին և պահանջներին համապատասխան որակավորված անձը:

6. Տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայությունները մատուցվում են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 1264-Ն որոշման պայմաններին և պահանջներին համապատասխան:

7. Օրենքով սահմանված ընթացակարգի արդյունքում հաղթող մասնակցի հետ կնքվում է Ներքին գործերի նախարարության պահանջով բանավոր և գրավոր թարգմանությունների ծառայությունների մատուցման պայմանագիր, այդ թվում՝ նյութերի գրավոր հաստատված թարգմանություններ և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձ ապահովելու պայմանագիր: